ած կերպարանքները բերում են անցորդի վրայ զարհուրանք, միեւնոյն ժամանակ լցնելով նրա սիրտը մի պատկառելի երկիւղածութեամբ դէպի մեծ աստուածուհու վեհութիւնը, որ ցոյց էր տոել իր նշանները այն թշոառների վրայ:

Երբ մենք անցնում էինք «խեղճերի» միջով, մի պատանի, մաշուած եւ գունաթափ երեսով, գեղեցիկ երկնագոյն աչքերով, եւ շէկ-մետաքսանման մազերով, վեր թռաւ տեղից եւ գրկեց ինձ, ասելով.

— Ֆարհատ, ես վախում եմ դրանցից...

Պատանին ցոյց տոեց «խեղճերին», որոնց կարգում նստացրել էին եւ իրան:

Ես ճանաչեցի. նա տէր Թոդիկի որդին՝ Ստեփանն էր:

Մինչեւ իմ խօսելը, շուտ վրայ հասաւ աբեղաներից մէկը, որ կանգնած «խեղճերիէ մօտ պատմում էր անցորդներին, թէ նրանցից իւրաքանչիւրն ինչ յանցանքի համար ենթարկոած էր տիրամօր պատժին: Աբեղան, ինձանից հեռացնելով Ստեփանին, ստիպեց նստել իր տեղը: Պատանին ողորմելի կերպով նայեց մեզ վրայ եւ գլուխը քարշ գցեց: Խե՜ղճ տղայ, ընտանիքը, որ անբախտացրել էր նրան, բաւական չէր, որ չէր զգում իր բարբարոսութիւնը, այժմ բոլորովին դուրս էր գցել թշոառ զոհին իր միջից :

Մենք մտանք վանքի մէջ: Այստեղ տաճարի սուրբ սեղանի վրայ կարգով շարած էին՝ արծաթի եւ ոսկու մէջ պատած սրբոց մասունքներ եւ զանազան տեսակ մեծ եւ փոքր խաչեր: Ուխտաւորները հերթով մօտենում էին, համբուրում էին եւ գցում էին նրանց մօտ դրած թասերի մէջ փողեր:

Համբուրելով սուրբ մասունքները, մենք անցանք երկրպագութիւն տալու աստուծոյ մօր գերեզմանին:

Ամէն տեղ դրած են գանձանակի թասերը, որոնց մէջ ուխտաւորները գցում են իրանց նոէրները: Աբեղան, կանգնած գանձանակի թասերի մօտ, պատմում է սրբութիւնների հրաշալի զօրութիւնը, շարժւում է ուխտաւորների ջերմեռանդութիւնը, եւ ուժ է տալիս նրանց առատաձեռնութեանը:

Այս բոլորն ինձ վրայ այն տպաւորութիւնը չէր գործում, ինչ որ այժմ գրում եմ. դա վերջին ժամանակներում, շատ տարիներից յետոյ, հին տպաւորութիւնների այլակերպած արտադրութիւնն է: Իսկ այն ժամանակ ես էլ, նախապաշարմունքներով լի, նոյն սնահաւատ ուխտաւորներից մէկն էի: Ես մինչեւ այսօր չեմ կարող մոռանալ այն ուրախութիւնը, երբ Մարօն, տալով ինձ Մարգարիտի ձեռքը, ասաց.

— Հիմա համբուրոեցէք եւ քոյր-եղբայր դարձէք: